ԿԱՐԵՆ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ*

DOI:10.57155/HYDO1091

ՌՈՒՄԻ ՍՈՒԼԹԱՆՈՒԹՅԱՆ ՀԱԿԱԹՈՌ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՆԱՆԻԱՆ

Բանալի բառեր՝ *Կաթողիկոս, Անանիա, Կիլիկիա, հիշատակարան, սուլթան, Կեսարիա, Հռոմկլա:*

Պատմական որոշ դեպքերի կամ գործիչների վերաբերյալ հայագիտության մեջ եղած տվյալները և պատկերացումները ժամանակի ընթացքում լրացման, ամբողջացման կարիք ունեն, պայմանավորված նոր սկզբնաղբյուրների ի հայտ գալով և արդեն հայտնիների՝ ավելի մանրամասն ուսումնասիրությամբ: Այդպիսի մի օրինակ է ԺԳ դարի սկզբներին Ռումի (Իկոնիայի) սուլթանության հակաթոռ կաթողիկոս Անանիային վերաբերող պատմությունը, որի մասին պահպանվել են հայ և ասորի պատմիչների վկայություններ, հիշատակարաններում տեղ գտած տվյալներ և այլ օժանդակ նյութեր:

Հայ պատմագրությունն Անանիային անդրադարձել է Միքայել Չամչյանից[1] *սկսած, որը հիմնականում օգտագործել է Կիրակոս Գանձակեցու հայտնած տեղեկությունները, այնուհետև հակաթոռ կաթողիկոսի գործունեությանն անդրադարձել է Մաղաքիա պատրիարք Օրմանյանը*[2]*: Գանձակեցու հաղորդումը նկատի ունենալով, նրանք այն եզրակացության են հանգել, որ Անանիան հակաթոռ կաթողիկոս է դարձել 1203 թ.՝ Գրիգոր Զ Ապիրատի (1194-1203) մահից և Հովհաննես Զ Սսեցու (1203-1221) օծումից անմիջապես հետո, իսկ պատճառը եղել է նրա դժգոհությունը, որ ոչ թե ինքն է կաթողիկոս դարձել, այլ Հովհաննես Սսեցին:*

Հայագետ Հայկ Բերբերյանը 1964 թ. «Սիոն» ամսագրում երկու մասով հրատարակեց «Անանիա հակաթոռ կաթողիկոս 1201, 1211 (1223?)»[3] *վերնագրով հանգամանալից հոդվածը, որտեղ ԺԳ դարի սկզբների մի քանի հիշատակարանների տվյալներն օգտագործելով, էական ճշտումներ կատարեց Անանիա-*

---

* Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարան, պ.գ.դ., karenmatevosian@gmail.com, հոդվածը ներկայացնելու օրը՝ հոկտեմբերի 22, 2022, գրախոսելու օրը՝ հոկտեմբերի 29, 2022:

1 **Մ. Չամչեան**, *Պատմութիւն Հայոց*, հ. Գ, Վենետիկ, 1786, էջ 175-177:

2 **Մ. Օրմանեան**, *Ազգապատում*, հ. Ա, Ս. Էջմիածին, 2001, էջ 1828-1829: Տ՛ես նաև **Հ. Անառյան**, *Հայոց անձնանունների բառարան*, հ. Ա, Երևան, 1942, էջ 163-154:

3 **Հ. Պէրպէրեան**, «Անանիա հակաթոռ կաթողիկոս», *Սիոն*, 1964, էջ 286-289, 360-363:

յի վերաբերյալ, մասնավորապես ցույց տալով, որ նա կաթողիկոս է դարձել ոչ թե 1203 թվականին, այլ ավելի վաղ՝ 1201-ին, ուստի, նրա հակաթոռության պատճառն էլ սոսկ Հովհաննես Սսեցու ընտրությունից դժգոհ լինելը չէր: Ուսումնասիրողն անդրադարձել է նաև այլ հարցերի, որոնց մասին կնշենք ստորև: 1964-ին Հ. Բերբերյանն Անանիային նվիրված հոդվածը՝ կարևոր մի լրացումով, որը վերաբերում էր կաթողիկոսի մահվան թվականին՝ 1227 (քաղված Ստեփանոս Օրբելյանի ժամանակագրությունից), վերահրատարակեց ֆրանսերենով[4]:

Անանիայի մասին ուշագրավ տեղեկություններ է հաղորդում նաև ասորի պատմիչ Անանուն Եդեսացին, որոնք ծանոթ չեն եղել Հ. Բերբերյանին: Եդեսացու ժամանակագրությունը հայերենով հրատարակվել է 1982-ին Լևոն Տեր-Պետրոսյանի աշխատասիրությամբ[5]: Ստորև կփորձենք հնարավորինս ամբողջացնել Անանիա հակաթոռ կաթողիկոսի մասին տվյալները՝ աղբյուրագիտական նյութերն ի մի բերելով և որոշ հարցեր պարզաբանելով՝ սկսելով պատմիչներից:

Կիրակոս Գանձակեցու և Անանուն Եդեսացու տեղեկությունները

*Անանիայի մասին հիմնական աղբյուրներից է Կիրակոս Գանձակեցու Պատմությունը, որտեղ նա հիշատակվում է երկու տեղում: Առաջին անգամ նշվում է Գրիգոր Քարավեժ կաթողիկոսի (1193-1194) մահվան առնչությամբ, որպես կաթողիկոսի հակառակորդներից մեկը. «Եւ ապա Գրիգորիս մի ամ... Եւ էր նա հասակաւն գեղեցիկ և բարուք տեսանելով. բայց զի մախողք բազում էին նորա, արկին բարուրս ինչ ի վերայ նորա եպիսկոպոսքն նախանձոտք և մատնեցին զնա ստութեամբ Լևոնի թագաւորի: Եւ նա հրամայեաց արգելուլ զնա ի բերդ մի, մինչ քննութիւն լիցի ճշմարտութեամբ վասն նորա, և ինքն գրեաց թուղթ յԱրևելս՝ յաշխարհն Հայոց առ վարդապետս և եպիսկոպոսս, եթէ զինչ կամք իցեն նոցա վասն այնր: Եւ մինչ չև պատասխան ընկալեալ, վախճանեցաւ կաթողիկոսն այսպիսի մահուամբ. Յաւուր միում տեսին զնա անկեալ ընդ պարիսպ բերդին՝ ունելով կտաւ զմիջաւ իւրով, այնպէս մեռեալ: Եւ զայս ոմանք ասէին, եթէ մախողքն նորա ընկեցին եպիսկոպոսքն, որք ակն ունէին ժառանգել զաթոռն, յորոց **մինն ասէին զՅովհաննէս, որ յետ նորա կալաւ զաթոռն, և զԱնանիա, որ եղև հակառակաթոռ ի Սեւաստ, յիշխանութեան սուլտանին Հոռոմոց**, և*

---

4 **H. Berbérian**, « Le patriarcat arménien du sultanat de Roum, l'anticatholicos Anania », *REArm.*, T. 3, 1966, p. 233-241.

5 **Անանուն Եդեսացի**, *Ժամանակագրություն*, թարգմանություն բնագրից, առաջաբան և ծանոթագրություններ *Լ. Տեր-Պետրոսյանի* (Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, հ. 12, Ասորական աղբյուրներ, հ. Բ), Երևան, 1982:

այլք յեպիսկոպոսաց անտի՝ արք վեց: Եւ կէսք ասէին, եթէ ի գիշերի կամեցաւ փախչել ի բերդէ անտի, հնարեցաւ իջանել ընդ պարիսպն կտաւովն, և կտրեալ կտաւոյն, անկաւ և մեռաւ: Զճշմարիտն մեք ոչ գիտեմք, այս արդարադատին Աստուծոյ է գիտելի...»[6]*:*

*Շարունակելով, պատմիչը գրում է Գրիգոր Ապիրատի աթոռակալության և նրա մահից հետո աթոռին տիրելու շուրջ եպիսկոպոսների պայքարի մասին, որի արդյունքում ընտրվեց Հովհաննես Սսեցին, իսկ Անանիան Ռումի սուլթանին կաշառք տալով հակաթոռ կաթողիկոս դարձավ Սեբաստիայում. «Եւ ապա տէր Գրիգոր Ապիրատն ամս եօթն: Եւ այնուհետէ սկսան մախողքն Գրիգորիսի զմիմեամբք ելանել, թէ ո՞ նստիցի յաթոռն հայրապետական: **Եւ Յովհաննէսն՝ զի ընտանի էր թագաւորին Լևոնի, բռնացաւ և կալաւ: Իբրև ետես զայն միւս եպիսկոպոս՝ Անանիա, չոգաւ նա առ սուլտանն, զոր Հոռոմոց կոչեն, և ետ նմա կաշառս, և նստաւ կաթողիկոս ի Սեբաստ, զի ասէր զինքն յազգէ կաթողիկոսին Պետրոսի, որ կայ Թաղեալ անդէն:** Եւ այսպէս բաժանեցաւ աթոռ սրբոյն Գրիգորի յերիս՝ մի բունն՝ զոր էառն Յովհաննէս, որ ի Հոռոմկլայն, և **միւսն ի Սեբաստ, զոր ապստամբեցաւ Անանիա**, և միւս ևս ի կղզւոջն, որ կոչի Աղթամար՝ Դաւիթ անուն»*[7]*:*

Գանձակեցու հենց այս վկայության արդյունքում է ձևավորվել այն կարծիքը (Մ. Զամչյան, Մ. Օրմանյան և այլք), որ Անանիայի հակաթոռ կաթողիկոսությունը սկզբնավորվել է 1203 թ.՝ Հովհաննես Սսեցու ընտրությունից հետո, Անանիայի դժգոհության պատճառով:

*Երկրորդ անգամ Կիրակոս Գանձակեցին Անանիայի անունը տալիս է, երբ իշխան Լևոն Բ-ը 1197 թ., իր թագադրությանն ընդառաջ, Հռոմի պապի պատվիրակին պատասխանելու համար հրավիրում է Գրիգոր Ապիրատ կաթողիկոսին ու բարձրաստիճան հոգևորականներին և համոզում համապատասխան երդմնագիր տալ, որ ընդունում են պապի դավանաբանական պահանջները. «Եւ արարին եպիսկոպոսքն զբան երդմանն, յորոց մի էր եպիսկոպոսն Տարսոնի Ներսէս Լամբրոնեցի... և Յովհաննէս, որ եղև կաթողիկոս, և **Անանիա՝ որ եղև հակառակաթոռ ի Սեբաստ**, և այլք ընդ սոսա»*[8]*:*

Պետք է ասել, որ թեև Կիրակոս Գանձակեցին երկու անգամ նշում է, որ Անանիան կաթողիկոս է եղել Սեբաստիայում, սակայն չի ասում, թե նա մինչ այդ Սեբաստիայի եպիսկոպոսն էր, ինչպես որ տարածվել է գրականության մեջ[9]*:*

---

6 **Կիրակոս Գանձակեցի**, *Պատմություն Հայոց*, աշխատասիրությամբ ***Կ. Մելիք Օհանջանյանի***, Երևան, 1961, էջ 147-148: Այս և հաջորդ մեջբերումներում ընդգծումները մերն են – Կ. Մ.:

7 **Կիրակոս Գանձակեցի**, էջ 148-149:

8 Նույն տեղում, էջ 157-158:

9 **Մ. Զամչեան**, նշվ. աշխ. էջ 175, **Ղ. Ալիշան**, *Սիսուան*, Վենետիկ, 1885, էջ 471, 507, **Հ. Անառյան**, *Հայոց անձնանունների բառարան*, հ. Ա, էջ 163 և այլն:

Նա, հավանաբար, Կիլիկիայի եպիսկոպոսներից մեկն էր, այդ պատճառով էլ անմիջական մասնակցություն է ունեցել ինչպես Գրիգոր Քարավեժի դեմ եղած գործողություններին, որպես մեկը նրանցից, որոնք «ակն ունէին ժառանգել զաթոռն», այնպես էլ Լևոն իշխանի հրավիրած հավաքին: Գանձակեցու վկայություններից երևում է, որ արդեն Գրիգոր Քարավեժի դեմ սկսված խարդավանքների ժամանակ Անանիան Հայոց կաթողիկոսական աթոռին հասնելու լուրջ հավակնություն է ունեցել՝ Պետրոս Գետադարձի տոհմից լինելու հիմնավորմամբ:

Անանուն Եդեսացին ժամանակով ավելի մոտ է Անանիայի ապրած շրջանին, իր ժամանակագրությունն ավարտել է շուրջ 1240 թ.[10] (Կիրակոս Գանձակեցին իր Պատմությունը գրել է ԺԳ դարի 60-ական թթ. կեսերին): Անանիան հիշատակվում է Եդեսացու ժամանակագրության երեք հատվածում, որոնցից առաջինը հետևյալն է. «1511 (1200) թվականին Պոնտոսի կողմերում հայտնվեց մի մարդ կաթողիկոսի ազգականներից, ինչպես ասում են, իրենց Գրիգորիսի ցեղից: Դա մի եպիսկոպոս էր, որի անունն էր Անանա, այսինքն՝ Անանիա: Շատ եպիսկոպոսներ անցան նրա կողմը և նրան կաթողիկոս հռչակեցին: Այդ հյուսիսային երկրները նա անջատեց Հռոմկլայում նստող Ապիրատից: Ասում են, որ նա արժանի էր գահին և հարուստ գիտելիքներ և լեզու ուներ»[11]:

Այս արժեքավոր տեղեկությունը ցույց է տալիս նախ, որ Անանիան կաթողիկոս է դարձել Գրիգոր Ապիրատի գահակալության ժամանակ (թվականի ճշգրտմանը կանդրադառնանք քիչ հետո՝ 1201 թ. հիշատակարանի առնչությամբ): Երկրորդ էական նշումն այն է, որ Անանիայի կաթողիկոսանալով՝ հայաբնակ հյուսիսային շրջաններն անջատվել են Հռոմկլայի աթոռից, որով շեշտվում է հակաթոռության քաղաքական կողմը և որը չէր կարող միայն Անանիայի ցանկությամբ լինել: Ինչպես երևում է, Կիլիկիայի Հայոց թագավորության հետ թշնամական հարաբերություններ ունեցող Ռումի Ռուքն ադ-Դին Սուլեյմանշահ Բ (1196-1204) սուլթանն Անանիային օգտագործել է իր շահերի համար ու նաև այդ է եղել հակաթոռ կաթողիկոսության ստեղծման պատճառը:

Նախորդ ուսումնասիրողներն անդրադարձել են հակաթոռության առաջացման քաղաքական կողմին: Հ. Բերբերյանը մասնավորապես գրում է. «Անանիայի հերձուածը, նոյնիսկ եթէ անձնական փառասիրութիւնը դեր մը ունեցած ըլլայ անոր մէջ, «ապստամբութիւն» մը ըլլալէ աւելի քաղաքական կացութեան մը պարտադրած լուծումի մը բնոյթ կը ստանայ... Անանիայի կաթողիկոսական աթոռը սելջուքեան պետութեան Հայոց կաթողիկոսական աթոռը եղած է»[12]: Պատմաբան Գագիկ Հարությունյանն ավելի առաջ է գնում և Անանուն Եդեսացու

---

10 **Անանուն Եդեսացի**, էջ 15:

11 Նույն տեղում, էջ 193:

12 **Հ. Պէրպէրեան**, նշվ. աշխ. էջ 362:

ժամանակագրության վերոհիշյալ հատվածը մեջբերելուց հետո գրում է, թե «Սեբաստիայի արքեպիսկոպոս Անանիայի այդ գործողությունները ծրագրել էր Իկոնիայի Ռուքն ադ-Դին Սուլեյմանշահ II իբն Ղլիճ-Արսլան սուլթանը»[13]: Կարծում ենք, որ այս դեպքի՝ սուլթանի «ծրագրած» լինելու մասին պնդումն այնքան էլ համոզիչ չէ: Մեր կարծիքով, Անանիան, որը հավակնոտ անձնավորություն էր, շատ շուտ հասկացել է, որ ծերացած Գրիգոր Ապիրատից հետո կաթողիկոսական ընտրության ժամանակ չի կարող Սսի արքեպիսկոպոս Հովհաննեսի մրցակիցը լինել, քանի որ վերջինս Լևոն թագավորի մտերիմն էր, Գանձակեցու բնորոշմամբ՝ «ընտանի էր թագաւորին Լևոնի», ուստի կաթողիկոս դառնալու խնդրանքով դիմել է Ռուքն ադ-Դինին (բնականաբար, հանդիպմանը ընծաներ է մատուցել, որը ժամանակի ընդունված կարգն էր). և նա տեսնելով, որ դա ձեռնտու է իրեն, համաձայնել է: Կարճ ասած՝ Անանիայի և սուլթանի շահերը համընկել են, սակայն նախաձեռնությունը, հավանաբար, եկել է առաջինից:

Անանուն Եդեսացու փոխանցած տեղեկության մեջ մի անճշտություն կա՝ այն, որ Անանիան ներկայանում էր իբրև «Գրիգորիսի ցեղից» սերած մարդ: Իրականում, Գրիգորիսի, այսինքն Գրիգոր Լուսավորչի տոհմակից էին իրենց համարում այսպես կոչված «Պահլավունի» կաթողիկոսները՝ սկսած Գրիգոր Բ Վկայասերից (1066-1105), այնուհետև նրա քրոջ թոռներից (Գրիգոր Գ, Ներսես Դ), մինչև Գրիգոր Ապիրատ: Իսկ Անանիան, ինչպես տեսանք Գանձակեցու հայտնածից, իրեն համարում էր կաթողիկոս Պետրոս Գետադարձի տոհմից[14]: Նկատենք, որ թեև Անանուն Եդեսացու տեղեկությունը անվան հարցում սխալ է, սակայն երևույթը ներկայացնելու առումով միանգամայն ներդաշնակ է Կիրակոս Գանձակեցու հայտնածին: Դա այն է, որ Անանիան կաթողիկոսական աթոռի նկատմամբ ունեցած իր հավակնությունը հիմնավորել է տոհմական ծագումով:

Անանուն Եդեսացու երկրորդ տեղեկությունը վերաբերում է Գրիգոր Ապիրատի մահվանը և հաջորդող դեպքերին, որտեղ կրկին հիշատակվում է Անանիան. «1514 (1203) թվականին Կիլիկիո երկրում մեռավ Հայոց կաթողիկոսը, որի անունն էր Ապիրատ...: Նրանից հետո գահին տիրեց Հովհաննես անունով մեկը, որը ոչ թե նրանց (նկատի ունի «Պահլավունի» կաթողիկոսներին – Կ. Մ.), այլ Կիլիկիայի իշխանների ցեղից էր, որոնք այժմ էլ կանգնած են իշխանության գլուխ: Որոշ ժամանակ անց Հովհաննես կաթողիկոսի խնդրանքով Ռումի երկրի սուլթանը պաշտոնազրկեց Անանիային: Եվ այդ երկրները կցվեցին նրան»[15]: Այս

---

13 *Հայոց պատմություն*, հ. II, գիրք երկրորդ, Երևան, 2014, էջ 360 (ենթաբաժնի հեղինակ՝ **Գ. Հարությունյան**):

14 Տեղին է հիշել, որ ժամանակին Փիլարտոս Վարաժնունին կաթողիկոս Գրիգոր Բ Վկայասերի համաձայնությամբ Հոնիում կաթողիկոս է ընտրել Պետրոս Գետադարձի քրոջ որդի Սարգսին (1076-78), տե՛ս **Մատթեոս Ուռհայեցի**, *Ժամանակագրություն*, Երևան, 1991, էջ 226, 232:

15 **Անանուն Եդեսացի**, էջ 193-194:

տեղեկությունը ցույց է տալիս, որ Հովհաննեսի և Անանիայի միջև հակամարտությունը շարունակվել է, սակայն արդյունքի մասին Անանուն Եդեսացու հաղորդումը՝ թե սուլթանը պաշտոնազրկել է Անանիային, հերքվում է ժամանակագրի հենց հաջորդ վկայությամբ:

«1516 (1205) թվականին Կիլիկիայի իշխան Լևոն հայը դիմեց Խոսրովշահին, որը տիրում էր Կապադովկիայի երկրում, և պահանջեց Անանիային: Սա, ինչպես նշեցինք, կաթողիկոս էր դարձել այն կողմերում և անջատվել այս կողմերի կաթողիկոսից՝ նզովելով վերջինիս և չեղյալ հայտարարելով նրա կաթողիկոսությունը»[16]*: Ինչպես տեսնում ենք, Անանիան շարունակել է աթոռակալել նաև Ռուքն ադ-Դինի եղբոր՝ Ղիյաս ադ-Դին Քեյխոսրով Ա-ի (1205-1211) ժամանակ, և նրա հակաթոռ կաթողիկոսության վերացման համար ջանքեր է գործադրել նաև Լևոն թագավորը: Սա նշանակում է, որ ոչ միայն Հայոց հոգևոր, այլև աշխարհիկ իշխանությունը, գիտակցելով Անանիայի պառակտիչ գործունեության վտանգը, փորձում էր չեզոքացնել այն: Պատահական չէ, որ Գանձակեցին Անանիայի հակաթոռությունը բնութագրում է որպես ապստամբություն («զոր ապստամբեցաւ՝ Անանիա»): Այնուամենայնիվ, Անանիան շարունակել է աթոռակալել և որպես կաթողիկոս հիշատակվում է նաև հետագա շրջանում՝ 1211, 1223, 1227 թվականներին:*

Հիշատակարանները և Թեոդորոս Կեսարացու վկայաբանությունը

*Հայերեն ձեռագրերի հիշատակարանների տվյալները մեծապես արժանահավատ են, քանի որ դրանց հեղինակները ոչ թե տեղեկություններ են հաղորդում տասնամյակներ առաջ տեղի ունեցած դեպքերի կամ անցած-գնացած մարդկանց մասին, այլ արձանագրում են հենց հիշատակարանի գրության ժամանակի՝ տվյալ տարվա փաստերը: Այդպիսի հատկանշական օրինակ է 1201 թ. Դարանաղյաց գավառի Ավագ վանքում ընդօրինակված Ավետարանում (ձեռ. ՄՄ 10359) Ստեփանոս գրչի ձեռքով գրված հիշատակարանը, որտեղ մասնավորապես ասվում է. «Ի վեցհարիւերորդի յիսներորդի թուաբերութեանս Հայոց նոր տումարիս (1201), ի գաւառիս Դարանաղեաց, առ ստորոտով լերինս Սեպոհի, ի հրեշտակակրաւն անապատիս կոչեցելոյ Աւագ վանք... Արդ, ի հինգերորդ ամի թագաւորութեան Հայոց Ղեւոնն յաղթող եւ բարեպաշտի... եւ **ի հայրապետութեան տեառն Գրիգորիսի, որ եւ յայսմ ամի երկուս բաժանի՝ եւ նստի Անանէէ ի Կեսարիա»**[17]:*

---

16 Նույն տեղում, էջ 194:

17 *Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԳ դար*, կազմեց ***Ա. Մաթևոսյան***, Երևան, 1984, էջ 12: Թվականի առնչությամբ հիշատակագրի նշումը, թե Լևոնի թագավորության 5-րդ տարին էր, որոշ շեղումով է, քանի որ 1198-ից հաշված 1201-ը գահակալության չորրորդ տարին է:

Հիշատակարանն առաջին անգամ հրապարակած Հայկ Բերբերյանն այստեղից իրավացիորեն եզրակացրել է, որ Անանիան հակաթոռ կաթողիկոս է դարձել ոչ թե Գրիգոր Ապիրատի մահից հետո և Հովհաննես Սսեցու ընտրությունից դժգոհ մնալով՝ 1203 թ., այլ դրանից առաջ[18]*: Ինչպես տեսանք, այս եզրակացությանն են հանգեցնում նաև Անանուն Եդեսացու վկայությունները: Սակայն հիշատակարանում Կեսարիայի՝ որպես Անանիայի առաջին նստավայրի մասին հիշատակումը շատ կարևոր է: Այն ավելի մոտ էր Կիլիկիայի սահմաններին և գուցե նաև դրանով պետք է բացատրել Հովհաննես Սսեցու և Լևոն թագավորի անհանդուրժող վերաբերմունքն Անանիայի նկատմամբ:*

Ինչ վերաբերում է հակաթոռության սկզբնավորման թվականին՝ 1200 թ. (Անանուն Եդեսացի), թե 1201 թ. (Ստեփանոս գրիչ), ապա կարծում ենք առավելությունը պետք է տալ վերջինին: Նախ, որովհետև ասորի պատմիչը գրել է տասնամյակների հեռվից, իր խոսքը սկսում է նախընթաց վիճակը ներկայացնելով՝ «1200 թվականին Պոնտոսի կողմերում հայտնվեց մի մարդ... շատ եպիսկոպոսներ անցան նրա կողմը» և այլն: Իսկ Ստեփանոս գրիչը ձեռագրի գրչությունն ավարտելով, փաստագրում է իր ժամանակի իրողությունները, նշում, որ գրել է կաթողիկոս Գրիգորի (Գրիգոր Ապիրատ) ժամանակ, բայց հենց այդ տարում՝ «յայսմ ամի» կաթողիկոսությունը երկու մասի է բաժանվել և «Անանէն» որպես կաթողիկոս նստել է Կեսարիայում:

*Ժամանակագրական առումով Անանիային նշող հաջորդ հիշատակարանը 1203 թվականից է, գրված Խաղտեաց երկրում, որը Փոքր Հայքի հյուսիսում է: «Արդ, ես ծառայս Աստուծոյ Յովնաննէս սկսայ զսուրբ Աւետարանս և կատարեցի ի ՈԾԲ (1203) թուականիս, **ի կաթողիկոսութեան տէր Անանիայի**, և յառաջնորդութեան տէր Մխիթարայ՝ երկրիս Խաղտեաց, ի փոքր մենաստանիս որ կոչի Ալնոցի վանք»*[19]*: Ինչպես տեսնում ենք, գրիչ Հովհաննեսի համար միակ կաթողիկոսն Անանիան է:*

Այս երկու հիշատակարանից հետո Անանիայի մասին հաջորդ կարևոր սկզբնաղբյուրը Թեոդորոս Կեսարացու վկայաբանությունն է, որի նահատակությունը տեղի է ունեցել 1204 թ. Կեսարիայում[20]*: Հայ երիտասարդ Թեոդորոսի մահմեդականություն ընդունելու, ապա այդ կրոնից հրաժարվելու և այդ պատճառով մահվան դատապարտվելու մասին է ընդարձակ վկայաբանությունը, որը*

---

18 **Հ. Պէրպէրեան**, նշվ. աշխ. էջ 360:

19 *Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԳ դար*, էջ 35:

20 Ռումի սուլթանությունում հայերի կարգավիճակի և Թեոդորոսի վկայաբանության մասին տե՛ս **S. Peter Cowe**, “The Armenian Community of the Konia Region in the Seljuk Period,” in: *Armenian Communities of Asia Minor* (Historic Armenian Cities and Provinces, ed. by ***Richard G. Hovannisian***, Vol. 13), Costa Mesa, 2014, Chapter 3, pp. 89-106:

շարադրված է այդ ժանրին հատուկ ոճով[21]*: Դեպքի մանրամասներից մեկն այն է, որ Թեոդորոսի բանտում եղած ժամանակ նրան է այցելում Գևորգ անունով քահանան, և նա խնդրում է իր մասին պատմել կաթողիկոսին և աղոթել իր համար՝ «երթայցես ի վանս հայրապետին մերոյ առ եպիսկոպոսապետն և տէրն իմ Անանիաս, և պատմեսցես նմա զամենայն անցս աղետից և զկիրս չարչարանաց անձին իմոյ. և աղաչեա զնա աղօթս առնել ի վերայ իմ»*[22]*: Քահանան աճապարում է «**առ կաթողիկոս Հայոց**»: Այստեղ վկայաբանության հեղինակը մի գովաբանական հատված է նվիրում Անանիային՝ ցույց տալով նրա խնամածու վերաբերմունքը կարոտյալների ու տառապյալների նկատմամբ: Այնուհետև ասվում է, որ կաթողիկոսը հավաքում է եպիսկոպոսներին, վարդապետներին ու բոլոր եկեղեցականներին և երեք ժամ աղոթում են Թեոդորոսի համար, ապա նույն քահանային հետ են ուղարկում՝ հայրապետի զորակցությունը հայտնելու Թեոդորոսին, նաև նրա հետ դնում «կերակուր ինչ ի պէտս մարմնոյ»*[23]*:*

Անանիան հիշվում է նաև վկայաբանության վերջում: Երբ երկրորդ անգամ քրիստոնեությունը չուրանալու համար քարկոծելով սպանում են Թեոդորոսին, որից հետո նրա մարմնի վրա պայծառ լույս է երևում, որը տեսնելով դահիճները սարսափած փախչում են, Ռուքն ադ-Դինը հրամայում է Անանիային նահատակի դին հողին հանձնել. «Եւ Շահ Ռուգնատին իմացեալ զեղեալսն՝ հրաման ետ Անանիայ հայրապետի փութով բառնալ և թաղել զնա»[24]*: Գնում են, հուղարկավորում նահատակին «յարժանաւոր տեղւոջ», որից հետո, ըստ հեղինակի՝ գերեզմանի վրա հրաշքներ և հիվանդների բժշկություններ են լինում:*

Սույն վկայաբանությունից երևում է, որ Անանիայի նստավայրն այդ ժամանակ շարունակում էր մնալ Կեսարիան[25]*: Ի դեպ, վկայաբանության մեջ Կեսա-*

---

21 Հակիրճ, պատմությունը հետևյալն է. ծնունդով կեսարացի Թեոդորոսը պարտքով փող է վերցնում, բայց վատնում է ու չի կարողանում վերադարձնել, գործը հասնում է մահմեդական դատավորին: Պատժից խուսափելու և պարտքից ազատվելու համար նա ուրանում է քրիստոնեությունը և մահմեդականություն ընդունում: Հետո զղջում է, հեռանում այլ փոքր քաղաք և նորից քրիստոնյա դառնում: Ժամանակ անց, կեսարացի մահմեդական մեկը տեսնում է նրան, ճանաչում, բացահայտվում է այս անգամ մահմեդականությունից հրաժարումը: Բռնում բերում են Կեսարիա, նույն դատավորի մոտ, որը կրկին համոզում է նրան մահմեդական դառնալ, բայց ո՛չ հորդորները, ո՛չ սպառնալիքները ու կտտանքները Թեոդորոսի որոշումը չեն փոխում: Նրան փորձում է համոզել նաև թագավորը, սակայն ապարդյուն: Ի վերջո, Թեոդորոսին քարկոծելով սպանում են: Վկայաբանությունը բավական ընդարձակ է, հիմնական տեքստը դատավորի ու Թեոդորոսի երկխոսություններն են՝ վերջինիս երկարաբան քարոզչական բնույթի խոսքերով (*Հայոց նոր վկաները (1155-1843)*, հ. Ա, աշխատութեամբ ***Յ. Մանանդեանի*** եւ ***Հ. Աճառեանի***, Վաղարշապատ, 1903, էջ 73-92):

22 *Հայոց նոր վկաները*, էջ 84:

23 Նույն տեղում, էջ 85:

24 Նույն տեղում, էջ 92:

25 **Հ. Պերպերեան**, նշվ. աշխ. էջ 360:

րիայի մասին ասվում է՝ «որ է աթոռ հայրապետական և թագաւորական, և ամենայն քաղաքաց Յունաց գահերիցագոյն»[26], *նկատի ունենալով այդ քաղաքի փառավոր անցյալը և կարևորությունը քրիստոնեական եկեղեցու համար: Հավանաբար նաև այդ հանգամանքը հաշվի առնելով է Անանիան իր աթոռը հաստատել Կեսարիայում:*

Թեոդորոս Կեսարացու վկայաբանությանը՝ Անանիայի առնչությամբ, անդրադարձել են բոլոր նախորդ ուսումնասիրողները (Մ. Չամչյան, Մ. Օրմանյան, Հ. Բերբերյան), այն դիտարկելով որպես վերջինիս մասին մի սկզբնաղբյուր: Սակայն բնագրի ուսումնասիրությունը մեզ հանգեցրել է այն եզրակացության, որ վկայաբանության և Անանիայի կապն ավելի խորն է, և որ վկայաբանությունը գրի է առնվել հենց Անանիայի պատվերով: Հատկապես ուշագրավ է, որ վկայաբանության սկզբնամասում՝ ժամանակի իրավիճակը ներկայացնող հատվածում, փառաբանվում է սուլթան Ռուքն ադ-Դինը. «Ընդ ժամանակս բռնակալութեան ***մեծի արքային Տաճկաստանի Սուլիման Շահ Սուլտան Ռուգնատնին, որ բազում հանդէս քաջութեան և յաղթութեան պատերազմի ցուցեալ յաւուրս ժամանակաց իւրոց, և յաչս յոքունց մեծարեալ ահ արկանելով ամենայն թագաւորաց տիեզերաց****: Սա որդի գոլով մեծ և յաղթող ինքնակալ Խլիճ Ասլան սուլտանի, ուստի գրաւեալ սորա ընդ իշխանութեամբ տէրութեանն իւրոյ կողմանս հիւսիսոյ, սկսեալ ի Կեսարացւոց մայրաքաղաքէն մինչև ի մեծն Բիւզանդիոն, որ այժմ կոչի Կոտանդինոպօլիս, ունելով ընդ իշխանութեամբ զՊոնտոս և զՍեբաստիա և զամենայն զեմենտացւոց և զՏրապիզոնտացւոց զտէրութիւնն, և հասեալ մինչև ի մեծ և ի հռչակաւոր քաղաքն Թէոդուպօլիս, որ կոչի Կարնոյ քաղաք, նուաճեաց ընդ գաւազանաւ զԵկեղեաց և զԴարանաղեաց, արկ ընդ ձեռամբ զիշխանն Ծոփաց, փութացաւ մինչև ի լայնանիստ քաղաքն Մելիտենի, մերձ ի սահմանսն Եդեսացւոց,* ***համարձակեցայց ասել՝ թէ և զամենայն աշխարհ, տիրելով ի վերայ ամենայն հայրենական աշխարհաց իւրոց****»*[27]*:*

Այս հատվածն ակնհայտորեն ցույց է տալիս, որ վկայաբանությունը շարադրվել է տեղում, այսինքն՝ հենց Կեսարիայում ապրող հայ հոգևորականի ձեռամբ: Հեղինակը, որը գրվածքից դատելով, բանիմաց և կրթված անձնավորություն էր[28]*, քաջ ծանոթ է եղել ժամանակի ռազմաքաղաքական անցուդարձին, գրում է որպես ականատես, քրիստոնեության ջերմեռանդ պաշտպան է, մի կողմից սգում է նահատակ Թեոդորոսի համար, բայց մյուս կողմից՝ փառաբանում*

---

26 *Հայոց նոր վկաները*, էջ 75:

27 Նույն տեղում, էջ 74-75:

28 Վարքագրական գրականության հմուտ հետազոտող Քնարիկ Տեր-Դավթյանը շատ բարձր է գնահատում Թեոդորոս Կեսարացու վկայաբանության հեղինակին (**Ք. Տեր-Դավթյան**, *Հայկական սրբախոսություն վարքեր և վկայաբանություններ (V-XVIII դդ.)*, Երևան, 2011, էջ 321-323):

Ռուքն ադ-Դինին: Պետք է ասել, որ մահմեդական իշխանավորի նման մեծարական ներկայացումը հատուկ չէ վարքագրական գրականությանը: Մեր ենթադրությունը, թե Թեոդորոս Կեսարացու վկայաբանությունը շարադրվել է Անանիա հակաթոռ կաթողիկոսի հանձնարարությամբ, հիմնված է նաև այն հանգամանքի վրա, որ նա այստեղ, փաստորեն, հանդես է գալիս որպես տեղի հայերի հոգևոր ապավեն, նաև շեշտվում է, որ Թեոդորոսի մարմինը հողին հանձնելու հրամանը նա ստացել է անձամբ սուլթանից: Ռուքն ադ-Դինին նվիրված վերոնշյալ գովաբանական հատվածն ակնառու կերպով առանձնանում է Թեոդորոսի նահատակության ողբերգական պատմության ընդհանուր համատեքստից, ուստի կարծում ենք, որ այն տեղ է գտել վկայաբանության մեջ պատվիրատուի ցանկությամբ՝ քաղաքական նկատառումներով:

Անանիայի մասին հաջորդ հիշատակարանը 1211 թվականից է, գրված Սեբաստիայում Հայրապետ գրչի ձեռքով. «Արդ, գրեցաւ սուրբ Աւետարանս ձեռամբ Հայրապետի նուաստի քահանայի ըստ աշխարհի, ընդ հովանեաւ Սուրբ Աստուածածնին և Սուրբ Սարգսի զաւրավարին, որ յանուն սոցա կանգնեցալ սուրբ եկեղեցիս ի քաղաքիս Սեբաստիա»[29]: Գրիչը ժամանակի կաթողիկոսին նշելիս սրամիտ դիտարկում է անում՝ ասելով, որ չգիտի, թե ում անունը գրի, և նշում է իրար հակառակ երեք կաթողիկոսներին՝ Հովհաննես, Անանե, Դավիթ: Այստեղ հիշված Դավիթը՝ Արքակաղնեցին է, որին Լևոն թագավորը 1207 թ. Սսում կաթողիկոս էր դարձրել, Հովհաննես Սսեցու հետ գժտվելու պատճառով[30]: «Արդ, ի հայրապետութեանն՝ **ոչ գիտեմ ասել, եթե զում գրեցից անուն, այլ ասեմ թե երից հակառակաց՝ տէր Յովհաննիսի, տէր Անանէի եւ տէր Դաւթի,** իսկ ի մերում դիտապետութեանս՝ **տէր Գրիգորի սուրբ եւ ընտրեալ եպիսկոպոսի,** որ է հրեշտակ ի մարմնի, եւ զարմ մեծի եւ հռչակաւոր վարդապետի»[31]: Կաթողիկոսների թվարկումից հետո, ինչպես տեսնում ենք, գրիչը մեծարանքով նշում է Սեբաստիայի եպիսկոպոս Գրիգորին: Հիշատակարանի այս հատվածից կարելի է դատել, որ 1211 թ. Անանիան շարունակում էր գտնվել Կեսարիայում, որովհետև նրա Սեբաստիայում լինելու դեպքում Հայրապետ գրիչը դժվար թե այսպիսի ձևակերպումներ օգտագործեր:

Անանիայի վերաբերյալ չորրորդ և վերջին հիշատակարանը 1223 թվականից է, գրված Գրիգոր գրչի ձեռքով Մնձրո Մարգ կոչված գավառի «Առոյծ Մարգ» գյուղում. «Բայց գրեցաւ ի թուականիս Հայոց ՈՀԲ (1223), յերրորդում

---

29 Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԳ դար, էջ 75:

30 Ըստ վերջերս շրջանառված տեսակետի, հնարավոր է, որ Դավիթ Արքակաղնեցին կաթողիկոս է դարձել 1204/5 թ. (**Վ. Թորոսյան**, «Սսի ԺԳ դարասկզբի եկեղեցական ժողովը հայլատին հարաբերությունների համատեքստում», Գեղարվեստի ակադեմիայի տարեգիրք, թիվ 11, Երևան, 2021, էջ 136-138):

31 Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԳ դար, էջ 75:

ամի հայրապետութեան ***տէր Անանի Հայոց կաթողիկոսի****, ի գաւառիս Մնձրոյ Մարգ, ի գեղս որ կոչի Առոյծ Մարգ, ընդ հովանեաւ Սուրբ Աստուածածնին եւ Սրբոյն Գրիգոր եւ Սրբոյն Յակոբայ»*[32]*:*

Հիշատակարանն առաջին անգամ հրատարակել է Զավեն վրդ. Արզումանյանը «Սիոն» ամսագրում, որտեղ «յերրորդում ամի հայրապետութեան տէր Անանի Հայոց կաթողիկոսի» հատվածը նկատի ունենալով, կարծում է, թե հիշատակարանի 1223 թվականը սխալ է: Ըստ նրա, քանի որ Անանիան աթոռակալել է 1203-ից՝ «հետևաբար ձեռագիրս գրուած պէտք է ըլլայ 1206 թուին»[33]*: Ամսագրի խմբագրության անունից արված ծանոթագրության մեջ Նորայր Պողարյանն էլ նշում է. «Ձեռագրիս յիշատակարանի ՈՀԲ թուականը եթե ճիշդ է, այդ պարագային պէտք է ընդունիլ, որ Անանիա կաթողիկոսի 20-րդ տարին կըլլայ, առաջին տարին ընդունելով 1203-ը: Այս պարագային յիշատակարանի «յերրորդում ամի» բացատրութեան տեղ սպասելի էր Ի երորդում ամի, այսինքն՝ քսաներորդում ամի»*[34]*: Հ. Բերբերյանը նկատում է, որ Անանիայի կաթողիկոսության սկիզբը ոչ թե 1203, այլ 1201 թվականն է, հնարավոր համարելով, որ հիշատակարանի հրատարակիչը գուցե ՈԾԲ (1203)-ի փոխարեն ՈՀԲ (1223) է կարդացել կամ հիշատակարանի հեղինակն է սխալվել*[35]*: Ավելացնենք, որ ավելի ուշ հիշատակարանը ՈՀԲ (1223) թվականով է հրատարակել նաև Ավետիս Սանջյանը (ձեռագրի նկարագրության հետ միասին)*[36]*:*

Անանիայի մահը և հակաթոռ կաթողիկոսության վերացումը

Անանիայի մահվան թվականի և հակաթոռ կաթողիկոսության գործունեության ավարտի, ինչպես նաև մի քանի այլ հարցերի պարզաբանման համար կարևոր նշանակություն ունի Սյունյաց մետրոպոլիտ Ստեփանոս Օրբելյանի (մահ. 1303 թ.) ժամանակագրության մեջ պահպանված մի տեղեկություն: Հայտնի է, որ 13-րդ դարի վերջերին (1297 թ.) Ստեփանոս Օրբելյանն իր կոթողային աշխատությունը՝ «Սյունիքի պատմությունը» շարադրելուց առաջ, շուրջ մեկ դարյա պատմական անցքերի մասին տարբեր աղբյուրներից քաղված տեղեկություններով լրացրել է ԺԲ դարի պատմիչ Սամվել Անեցու ժամանակագրու-

---

32 Նույն տեղում, էջ 139: Տե՛ս նաև **Հ. Պերպերեան**, նշվ. աշխ. էջ 361:

33 **Զ. Արզումանեան**, «ԺԳ. դարու հայերէն ձեռագիր մը Public Library, Detroit, Michigan», *Սիոն*, 1962, համար 11-12, էջ 307-808:

34 Նույն տեղում, էջ 308:

35 **Հ. Պերպերեան**, նշվ. աշխ. էջ 361:

36 **A. Sanjian**, *A Catalogue of Medieval Armenian Manuscripts in the United States*, Berkeley, Los Angeles, London: University of California Press, 1976, pp. 387-391.

թյունը[37]*։ Այն պահպանվել է մեկ ընդօրինակությամբ, հավանաբար ԺԵ դարում ստեղծված մի արժեքավոր ժողովածուի մեջ (ՄՄ 8481)։ Այստեղ նշված են հիմնականում հակիրճ տեղեկություններ, որոնք գրված են ժամանակագրական աղյուսակի նեղ սյունակում։ Ներկայացվող հատվածը տեղ է գտել Հայոց ՈՀԶ (1227) թվականի դիմաց*[38]*, բայց հայտնի չէ, թե ինչ աղբյուրից է քաղված։ Այն հետևյալն է.*

«Խայտն կոչեցեալ[39] *Աննա ուժով սուլտանին նստի կաթողիկոս ի Հռոմ, հակառակ աթոռոյն Կոստանդեա և դապալեաց զկաթողիկոսութիւնն, որ և յետ բազում հնարից, աղօթիւք խնդրէ տէր Կոստանդին բառնալ յերկուցն մինն, և որ հաճոյն է Տեառն մնալ և միամտել։ Ապա ի տեսլեան հրեշտակ Տեառն գրէ յաջ թաթի ձեռինն տէր Կոստանդնայ՝ եթէ բարձցի կաթողիկոսութիւն յԱննայէ և տացի Կոստանդնայ ծառայի Աստուծոյ, և եղև այնպէս, զի ի գիշերի սատակեալ այրն այն, բարձաւ ի միջոյ»*[40]*։*

Սույն հատվածի մասին բնագրի երկրորդ հրատարակիչ Վազգեն Հակոբյա-

---

37 ժամանակագրության հեղինակի հարցը հայագիտության մեջ վիճարկվել է։ Առաջին հրատարակիչ Աշոտ Աբրահամյանն այն համարել է Ստեփանոս Օրբելյանինը (*Ժամանակագրութիւն Ստեփաննոսի Օրբէլեանի*, հրատարակության պատրաստեց ***Ա. Աբրահամյանը***, Երևան, 1942), մինչդեռ երկրորդ հրատարակիչ Վազգեն Հակոբյանը այն կոչել է «Ստեփանոս եպիսկոպոսի ժամանակագրություն» հեղինակին համարելով Օրբելյանից տարբեր սյունեցի մեկ այլ եպիսկոպոս (*Մանր ժամանակագրություններ*, հ. 1, էջ 32-34)։ Սակայն նորագույն ուսումնասիրությունները ոչ մի կասկած չեն թողնում, որ հեղինակը հենց Ստեփանոս Օրբելյանն է։ Նշենք, որ ժամանակագրության մեջ հեղինակն իրեն կոչում է «այցելու», այսինքն՝ եպիսկոպոս՝ «ես՝ նուաստ Ստեփաննոս անուամբ **այցելու**»։ Ստեփանոս Օրբելյանը «Սյունիքի պատմության» վերնագրում նույնպես կոչվում է «այցելու»՝ «Հանդէս բանից քաղցրավէպ պատմութեանց Տանն Սիսական... նուաստ եւ ապիկար ոգոյ Ստեփաննոսի Սիւնեաց **այցելուի** եւ նախագահ մետրապալտի...» (ՄՄ 6271, 7բ), այդպես է կոչվում նաև 1299-ին գրած «Ողբ ի Ս. Կաթուղիկեն» չափածո երկի վերնագրում՝ «Բան բարառնական ոգեալ դիմառնաբար ի դիմաց Վաղարշապատու Ս. Կաթուղիկէին... շարեալ... ի Ստեփաննոսէ Սիւնեաց **այցելուէ**», ինչպես նաև իր վերջին՝ «Հակաճառութիւն ընդդէմ երկաբնակաց» (1302 թ.) երկի վերնագրում՝ «Տեառն Ստեփաննոսի Սիւնեաց **այցելուի** և նախագահ մետրապալտի...»։ Վերջապես Օրբելյանին «այցելու» է կոչում նաև Գլաձորի համալսարանի ուսուցչապետ Եսայի Նչեցին, նրա պատվերով գրած գործի նախաբանում. «Տէր Ստեփաննոս՝ **այցելու** եւ վերադիտող գերահոչակ... աթոռոյ Տանդ Սիւնեաց» (ՄՄ 1276, 3ա, 176ա)։ Տե՛ս **Սամուէլ Անեցի եւ շարունակողներ**, *Ժամանակագրութիւն*, աշխատասիրությամբ ***Կ. Մաթևոսյանի***, Երևան, 2014, էջ 44-50, **Կ. Մաթևոսյան**, *Նորավանքի վիմագրերը և հիշատակարանները*, Երևան, «Մուղնի» հրատ., 2017, էջ 33-37։

38 ՄՄ 8481, 206բ։ Նշված հատվածի բնագրում, էջի կենտրոնում եղած թվաշարքի մյուս կողմում ՈՀԶ (1227) թվականի դիմաց նշված է՝ «մեռաւ աթաբակ Իվանե»։ Որ Իվանե Զաքարյանը մահացել է 1227 թ., հայտնի է նաև այլ աղբյուրներից, այսինքն Անանիայի մահվան մասին նշումը համապատասխանում է այդ տարվան։

39 Բնագրում՝ «կոցեցեալ»։

40 ՄՄ 8481, 206բ, հմմտ. *Ժամանակագրութիւն Ստեփաննոսի Օրբէլեանի*, էջ 24, *Մանր ժամանակագրություններ*, հ. 1, էջ 40։

նը հետևյալ ծանոթագրությունն է կատարել. «Այս ավանդությունն ըստ երևույթին տարածված չի եղել, որը հայտնի չի Զամչյանին և Օրմանյանին»[41]: Ակնհայտ է, որ այստեղ խոսքը Անանիայի մասին է, որն այս դեպքում համարվում է կաթողիկոս Կոստանդին Բարձրբերդցու (1221-1267) հակաթոռ՝ «հակառակ աթոռոյն Կոստանդեա»:

Տեղեկության տեքստը հետաքրքրական է մի քանի առումով: Նախ բնագրական որոշ նրբերանգներ ցույց են տալիս, որ այն ձեռագրից ձեռագիր անցնելով և ընդօրինակվելով որոշ փոփոխությունների է ենթարկվել: Մասնավորապես, «Հոռոմը» դարձել է Հռոմ՝ «ուժով սուլտանին նստի կաթուղիկոս **ի Հռոմ**» (հմմտ. Գանձակեցու հաղորդումը՝ «Անանիա, չոգաւ նա առ սուլտանն, **զոր Հռոմոց կոչեն**... նստաւ կաթողիկոս»): «Անանիա» անունն էլ դարձել է «Աննա», հնարավոր է նախօրինակում երկրորդ «ա» տառի սղագրված լինելու կամ մեկ այլ պատճառով[42]: Պետք է նկատել, որ Անանիայի անունն, ըստ երևույթին, արտասանության որոշ յուրահատկություն է ունեցել: Հիշենք Անանուն Եդեսացու տեղեկությունը, որը գրում է՝ «դա մի եպիսկոպոս էր, որի անունն էր **Աննա**» և բացատրում՝ «այսինքն՝ Անանիա»[43]: Շատ հնարավոր է, որ Ստեփանոս Օրբելյանի օգտագործած աղբյուրում հենց «Աննա» ձևն է եղել, որն ավելի հեշտությամբ կարող էր դառնալ «Աննա»: Ինչպես վերը տեսանք, գրիչ Գրիգորն էլ 1223 թ. նրան կոչում է «**Աննան**»:

Շարունակության մեջ երևում է, որ Կոստանդին կաթողիկոսը փորձել է հնազանդության բերել Անանիային (ինչպես որ ավելի վաղ արել էին կաթողիկոս Հովհաննես Սսեցին և Լևոն Թագավորը), սակայն՝ «**յետ բազում հնարից**», արդյունքի չհասնելով, դիմել է Աստծո տնօրինությանը՝ «աղօթիւք խնդրէ տէր Կոստանդին՝ բառնալ յերկուցն մինն, և որ հաճոյն է Տեառն մնալ և միամտել»: Ի վերջո հարցը լուծվել է տեսիլքում հայտնված Աստծո հրեշտակի միջոցով, որը Կոստանդնի ձեռքին գրել է, որ կվերանա Անանիայի կաթողիկոսությունը, և նույն գիշեր վերջինս մահացել է:

Այս տեղեկությունն ուշագրավ է նաև նրանով, որ միակը լինելով, պահպանել է Անանիայի մականունը՝ «Խայտն կոչեցեալ»: «Խայտ» բառի ստուգաբանությունից ելնելով (բիծ, նշան մաշկի վրա) հնարավոր է ենթադրել, որ Անանիան դեմքին խալ է ունեցել, որից էլ առաջացել է նրա «Խայտ» մականունը:

---

41 *Մանր ժամանակագրություններ*, հ. 1, էջ 57:

42 Այդ վրիպակները կարող էին լինել տեղեկության մինչև Ստեփանոս Օրբելյանին հասնելը, բայց ավելի հավանական է, որ առաջացել են նրանից հետո, քանի որ մեզ հասած ԺԵ դարի ձեռագրում, որտեղ ընդօրինակվել է ժամանակագրությունը, այն ունի նաև այլ վրիպումներ, օրինակ, Դրազարկի փոխարեն գրված է «Դրազարդն», մեկ այլ տեղում՝ «զԿեսարիա»-ն դարձել է «զՂասարիա» (*Մանր ժամանակագրություններ*, հ. 1, էջ 41, 48): Այսինքն, ընդօրինակող գրիչը սահմանափակ գիտելիքների տեր մեկն է եղել:

43 **Անանուն Եդեսացի**, էջ 193:

Սակայն Անանիայի կենսագրության համար ամենակարևոր տվյալն այստեղ նրա մահվան թվականն է, որը նաև հակաթոռ կաթողիկոսության ավարտի տարին է: Այն, որ Անանիայից հետո հակաթոռ կաթողիկոսության գործունեությունը դադարել է, երևում է նշված տեղեկության համատեքստից ու որոշ մանրամասներից, օրինակ, երբ ասվում է, թե Կոստանդինը Աստծուց խնդրում է «բառնալ յերկուցն մինն, և որ հաճոյն է Տեառն՝ մնալ և միամտել», այսինքն, մեկը պիտի մնա և միաբան (միամիտ) լինեն: Հրեշտակը Կոստանդինի ձեռքին գրում է, թե՝ «**բարձցի կաթուղիկոսութիւնն յԱննայէ**», այսինքն՝ կաթողիկոսությունը կվերանա Անանիայից, իսկ նրա մահվան կապակցությամբ էլ նշվում է՝ «սատակեալ այրն այն, բարձաւ ի միջոյ», ասել է թե հակաթոռությունն էլ մեջտեղից վերացավ:

Հ. Բերբերյանն Անանիայի՝ որպես կաթողիկոսի, հաջորդ ունեցած լինելու հարցի մասին գրում է. «կարելի չէ ըսել թէ իրմով վերջ գտա՞ծ է այս հերձուած կաթողիկոսութիւնը, թէ Անանիա իր յաջորդը ունեցած է»[44]: Ապա աթոռի հնարավոր շարունակության մասին նշում է. «1243-ին Մոնկոլները պարտութեան մատնեցին սելջուքեան բանակները և սելջուքեան պետութիւնը ենթարկուեցաւ մոնկոլական տիրապետութեան: Քիչ ետք Հեթում թագաւոր կամովին ընդունեցաւ մոնկոլական գերիշխանութիւնը և հովանաւորութիւնը: Հավանական է, որ սելջուքեան արգելքը դադրած ըլլայ 1243-էն ետք, և Ամենայն Հայոց կաթողիկոսութիւնը իր իշխանութիւնը վերահաստատած՝ սելջուքեան սահմաններուն Հայերուն վրայ: Հերձուածը այսպես վերջ գտած կրնայ ըլլալ»[45]:

Կարծում ենք, որ հակաթոռության վերացման հարցում ժամանակի առումով այդքան հեռուն գնալու կարիք չկա, մանավանդ որ սկզբնաղբյուրներում որևէ այլ հակաթոռ կաթողիկոս չի հիշատակվում Կեսարիայում կամ Սեբաստիայում, իսկ 1239 թ. հենց Սեբաստիայում գրված մի հիշատակարանում (ՄՄ 7574) նշվում է միայն Կոստանդին Բարձրբերդցու անունը՝ «ի կաթողիկոսութեան տեառն Կոստանդի Հայոց դիտապետի...»[46]: Ստեփանոս Օրբելյանի ժամանակագրության մեջ եղած տեղեկությունից նույնպես, ինչպես վերևում տեսանք, երևում է, որ Անանիայի մահով հակաթոռ կաթողիկոսությունը վերացել է:

Վերջում անդրադառնանք Անանիայի տապանաքարին: Հ. Բերբերյանի վերոնշյալ հոդվածի կարևոր ճշգրտումներից մեկը վերաբերում է Անանիայի՝ Սեբաստիայում Ս. Նշան եկեղեցու հյուսիսային կողմում եղած (այժմ, ամենայն հավանականությամբ, գոյություն չունի) տապանաքարին ու տապանագրին: Եթե

---

44 **Հ. Պէրպէրեան**, նշվ. աշխ., էջ 362-363: Այս հատվածում նշված թվականը տպագրական վրիպակով տպված է 1233:

45 Նույն տեղում, էջ 363:

46 *Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԳ դար*, էջ 208:

նրանից առաջ Անանիային անդրադարձած ուսումնասիրողները չեն կասկածել տապանաքարի արձանագրության տվյալներին, մասնավորապես այնտեղ նշված մահվան՝ 1207 թվականին, ապա նա համապատասխան աղբյուրի հղումով ցույց է տալիս, որ տապանաքարը դրվել է շատ ուշ՝ 1825 թ., և նրա արձանագրության տեքստն էլ կազմվել է այդ ժամանակ, իսկ երկու հիշատակարան՝ 1211 և 1223 թվականներից, վկայում են, որ Անանիան այդ ժամանակ դեռ ողջ էր, ուստի տապանագրի թվականը սխալ է[47]*:*

Այնուամենայնիվ, Անանիայի տապանագիրը որոշակի արժեք է ներկայացնում: Առաջին հերթին, այն ցույց է տալիս, որ Անանիա հակաթոռ կաթողիկոսն ինչ-որ ժամանակ լքել է Կեսարիայի իր նստավայրը և տեղափոխվել Սեբաստիա, որտեղ էլ կնքել է իր մահկանացուն և հուղարկավորվել: Դրանով իր հաստատումն է գտնում նաև Կիրակոս Գանձակեցու վկայությունը, ըստ որի Անանիան աթոռակալել է Սեբաստիայում (քանի որ այդ մասին ուրիշ տեղեկություն չկա):

Ութ տողանոց չափածո տապանագիրն ըստ Գարեգին Սրվանձտյանի արտագրության այսպիսին է.

«Յայս դամբարանիս եդին զմարմին,
Տեառն Անանիա կաթողիկոսին,
Որ օծեալ նստաւ վեհապետ ազգիս,
Ի գերահռչակ սուրբ մենաստանիս,
Սա էր ազգական Պետրոսի մեծին,
Գետադարձ կոչեալ սուրբ հայրապետին,
Ժամանեալ վախճան սուրբ կենաց նորին,
Թուին վեց հարիւր յիսուն եւ վեցին»[48]:

Բուն տապանաքարի տեղադրման մասին տեղեկությունը հետևյալն է. «յաւուրս տեսուչ Յոհաննէս եպիսկոպոսի Սեբաստացւոյ շինեցաւ ի վերայ նորա (Անանիայի – Կ. Մ.) վայելուչ շիրիմ արդեամբ Քիւլէքճեան Յոհաննէսի ՌՄՀԴ 1825»[49]*: Այս առնչությամբ Հ. Բերբերյանը գրում է. «Այս յիշատակագրութենէն կը հետևի, թէ Յովհաննէս Սեբաստացիի օրով Անանիայի գերեզմանին վրայ տապանաքար չկար, և, հականաբար, ըստ աւանդութեան, գերեզման մը ցոյց կը*

---

47 **Հ. Պէրպէրեան**, նշվ. աշխ., էջ 289:

48 **Գ. Սրուանձտեանց**, *Թորոս աղբար*, հ. Ա, Կ. Պոլիս, 1879, էջ 179: Ըստ Հ. Բերբերյանի՝ տապանագրի տեքստը կազմողները Անանիայի մահվան թվականը վերցրել են Մ. Չամչյանի «Հայոց պատմության» 1786 թ. լույս տեսած երրորդ հատորից (**Հ. Պէրպէրեան**, նշվ. աշխ., էջ 288-289): Սակայն նրա հղած տեղում՝ «ի նոյն ամս մեռաւ և Անանիա առանձին կաթողիկոս Սեբաստիոյ» տեղեկությունը, որի համար աղբյուր չի նշվում, դրված է 1206 թվականին վերաբերող տեղեկությունների հատվածում (**Մ. Չամչեան**, նշվ. աշխ., էջ 183):

49 *Դիւան Հայոց պատմության*, գիրք Ժ, խմբ. ***Գիւտ Աղանեանց,*** Թիֆլիս, 1912, էջ 390:

տրուէր իբրև Անանիա կաթողիկոսինը, անոր մահեն շուրջ 600 տարի ետք»[50]:

Սակայն շատ ավելի հավանական է, որ Սեբաստիայի եկեղեցու մոտ եղել է նաև Անանիայի հին տապանաքարը, իսկ 1825 թ. պատրաստվել է միայն «վայելուչ շիրիմ», այսինքն վեցդարյա հին ու մաշված տապանաքարը փոխարինվել է նորով: Կարծում ենք, որ հին տապանաքարի վրա, ըստ այն ժամանակի սովորության, այդքան երկար արձանագրություն չպիտի լիներ, հավանաբար գրված են եղել հանգուցյալի անունն ու տիտղոսը և մահվան՝ «ի Քրիստոս» փոխադրվելու թվականը: Նոր տապանաքարի վրա ավելի ճոխ տեքստ են գրել, հավանաբար կաթողիկոսի մասին տվյալներ քաղելով Կիրակոս Գանձակեցուց և Մ. Չամչյանի՝ այդ ժամանակ արդեն շրջանառության մեջ գտնվող՝ 1786 թ. հրատարակված «Հայոց պատմությունից»:

Հին տապանաքարի գոյության մասին մեր ենթադրությունն ավելի հավանական է թվում նոր տապանաքարի տարեթվի շնորհիվ, որը թեև սխալ է, բայց դրանով հանդերձ, յուրովի հուշում է նախկին գրության ճիշտ թվականի մասին: Բանն այն է, որ երբ զուգադրում ենք Անանիայի մահվան իրական՝ 1227 և նոր տապանաքարի 1207 թվականները՝ համապատասխանաբար Հայոց ՈՀԶ (676+ 551= 1227) և ՈԾԶ (656+ 551= 1207), տեսնում ենք, որ հարյուրավորի և միավորի թվատառերը նույնն են, և միայն տասնավորի թվատառն է տարբեր: Կարելի է ենթադրել, որ Անանիայի հին տապանաքարին թվատառերով նշված է եղել ճիշտ թվականը՝ Հայոց ՈՀԶ (1227), սակայն մեջտեղի (տասնավորի) թվատառը եղծված է եղել կամ սխալ է վերծանվել (հասկացել են Հայոց ՈԾԶ), որի հետևանքով նոր տապանաքարի վրա գրել են 1207: Հնարավոր է, որ քարի այդ մասում կոտրվածք է եղել և երևացել է միայն տասնավորն արտահայտող «Հ» (70) թվատառի վերին մասնիկը, որից ելնելով այն որպես «Ծ» (50) են վերծանել[51]: Թերևս հին տապանաքարի վնասված լինելն է նաև պատճառ դարձել, որպեսզի 1825-ին պատրաստվի նոր՝ «վայելուչ» տապանաքար:

Ամփոփելով կարող ենք ասել, որ Կիրակոս Գանձակեցու պատմության, Անանուն Եդեսացու ժամանակագրության, Թեոդորոս Կեսարացու վկայաբանության, հայերեն ձեռագրերի չորս հիշատակարանների, Ստեփանոս Օրբելյանի ժամանակագրության մեջ պահպանված տեղեկությունները, վկայում են, որ 1201-1227 թթ. Ռումի սուլթանությունում՝ նախ Կեսարիայում, ապա որոշ ժամանակ անց Սեբաստիայում, գործել է հակաթոռ կաթողիկոսություն Խայտ մականունով Անանիայի գլխավորությամբ: Վերջինս հավանաբար սերում էր ԺԱ

50 **Հ. Պէրպէրեան**, նշվ. աշխ., էջ 289:

51 Նշենք, որ վիմագրության մեջ «Հ» տառի գրության մի ձև կա, որը շատ նման է «Ծ»-ի: Այդպիսին են, օրինակ, Կեչառիսի վանքում ԺԳ դարի մի տապանաքարի արձանագրության և Արարատի մարզի Ս. Կարապետ վանքի եկեղեցու ներսում եղած ԺԴ դարի սկզբների երկու վիմագրերում օգտագործված համապատասխան տառերը:

դարի կաթողիկոս Պետրոս Գետադարձի տոհմից և հավակնում էր Հայոց կաթողիկոսական աթոռին, սակայն Կիլիկիայում իր նպատակին հասնելու հնարավորություն չտեսնելով, հակաթոռ կաթողիկոսություն է ստեղծել Ռումի սուլթանության տարածքում՝ Ռուքն ադ-Դին Սուլեյմանշահ Բ-ի համաձայնությամբ (1201 թ.)։ Նա վայելել է տեղի իշխանությունների բարեհաճությունը, քանի որ հակաթոռ կաթողիկոսության գոյությունն այդ տարածքի հայությանը հոգևորեկեղեցական առումով կտրում էր Հռոմկլայի կաթողիկոսությունից և Կիլիկիայի Հայոց թագավորությունից։ Այդ պատճառով նախ Հովհաննես Սսեցի կաթողիկոսն ու Լևոն թագավորը, ապա Կոստանդին Բարձրբերդցի կաթողիկոսը փորձել են հնազանդության բերել հակաթոռ կաթողիկոսին, սակայն արդյունքի չեն հասել։ 1227 թ. Անանիայի մահով հակաթոռ կաթողիկոսությունը վերացել է։

KAREN MATEVOSYAN

ANTICATHOLICOS ANANIA OF THE SULTANATE OF RUM

Key words: Catholicos, Anania, Cilicia, colophon, sultan, Caesarea, Hromkla.

The information given in the history of Kirakos Gandzakets‘i, in the Chronicles of the Anonymous of Edessa and Step‘anos Orbelean, in four colophons of Armenian manuscripts and in other sources witness that in 1201–1227, in the Sultanate of Rum, in Kayseri, and after some time in Sebastia (Sivas), there was a catholicosate (patriarchate) under the leadership of Anania, nicknamed Khayt. He probably descended from the family of the 11th century Catholicos Petros Getadardz and claimed to be the Catholicos of all Armenians. Not having achieved his goal in Cilicia, in 1201 he created a catholicosate on the territory of the Sultanate of Rum by the consent of Sultan Rukn ad-Din Suleimanshah II. Anania enjoyed the favor of the local authorities, since the existence of this catholicosate separated in spiritual and ecclesiastical terms the Armenians living in the territory of the sultanate from the Catholicosate of All Armenians located in Hromkla and from the Armenian Kingdom of Cilicia.

The article clarifies some facts of Anania's life and work. It is demonstrated that the Catholicos of All Armenians Yovhannēs Ssets‘i (1203–1221), King Levon I (1198–1219), and later also Catholicos Constantine (1221-1267) tried to achieve the obedience of the anti-Catholicos, but without result, and that in 1227 with the death of Anania the catholicosate founded by him in the Sultanate of Rum ceased to exist. A study of the text of the *Martyrdom of Theodore Kesarats‘i* revealed that it was

written in 1204 in Kayseri, at the behest of Anania. Among other issues, the question of the date of Anania's death in the inscription on his tombstone is also discussed in the article.

КАРЕН МАТЕВОСЯН

АНТИКАТОЛИКОС РУМСКОГО СУЛТАНАТА АНАНИЯ

Ключевые слова: Католикос, Анания, Киликия, памятная запись, султан, Кесария, Ромкла.

Сведения, сохранившиеся в истории Киракоса Гандзакеци, в летописях Анонима Эдесского и Степаноса Орбеляна, в четырех памятных записях армянских рукописей и в других источниках показывают, что в 1201-1227 гг. в Румском (Иконийском) султанате, в Кесарии (Кайсери), а через некоторое время в Себастии (Сивас), существовал католикосат (патриарший престол) под предводительством Анании по прозвищу Хайт. Он вероятно происходил из рода католикоса XI века Петроса Гетадарца и претендовал на место католикоса всех армян, но не достигнув своей цели в Киликии, в 1201 г. создал католикосат на территории Румского султаната с согласия султана Рукн ад-Дина Сулейманшаха II. Анания пользовался благосклонностью местных властей, так как существование этого католикосата в духовном и церковном отношении отделяло армян, живущих на территории султаната, от находящегося в Ромкле католикосата всех армян и от Киликийского Армянского царства.

В статье уточнены некоторые факты жизни и деятельности Анании. Показано, что католикос всех армян Ованес Ссеци (1203-1221) и царь Левон I (1198-1219), а в последствии также католикос Константин (1221-1267) пытались добиться покорности антикатоликоса, но результатов не добились, и что 1227 г. со смертью Анании основанный им католикосат в Румском султанате перестал существовать. На основании изучения текста “мученичества Феодора Кесарийского” предполагается, что оно было написано в 1204 г. в Кесарии, по велению Анании. Рассматривается вопрос о дате смерти Анании в надписи на его надгробном камне, и т. д.